առաջնահերթ նշանակություն ու սկզբունքային ժանրակազմակերպիչ դեր է հատկացվում գեղարվեստական հորինումի, ստեղծագործական երևակայության տարրերին»[3]:

Ուստի՝ բնական է, որ հայ պատմագրության ընդհանրապես ու մասնավորապես Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության գործառնականությունը առաջին հերթին պայմանավորված է եղել գեղարվեստական արժանիքներով, գեղեցիկ խոսք կառուցելու վարպետությամբ ու կարողություններով: Պատմիչները հստակ գիտակցել են դա, ու թեև նրանց նպատակն առաջին հերթին եղել է սերունդներին հավաստի պատմական տեղեկությունների փոխանցումը, այնուհանդերձ, անընդհատ ուղեկից է եղել նաև այն մտայնությունը, որ պատմությունը պետք է մատուցվի գեղեցիկ ու պատկերավոր խոսքի միջոցով: Իհարկե, դա հանգեցրել է այն բանին, որ շատ պատմիչների մոտ երբեմն ոճի արհեստականություն է նկատվում, և զգալի են գեղեցիկ գրելու ներքին ճիգերը:

Այս գլխում քննվող խնդիրներն առավելապես վերաբերում են այն մասնավորություններին, որոնք Դավրիժեցու պատմագրքին հաղորդում են գեղարվեստական արժեք. կերպարներ ու կերպարային համակարգ, դիմանկար, դիմանկարային բնութագրումներ, գեղարվեստական արտահայտչամիջոցներ՝ համեմատություններ, բաղաձայնույթ, այլախոսություն-պատկերավորություններ, թվարկում, մակդիր և այլն, ճարտասանական հնարքներ: Այդ ամենն առավել ակնառու ցուցանելու համար ներկայացվել են նաև «Գիրք պատմութեանց»-ի ոճական ընդգրկումներն ու Դավրիժեցու աշխատանոցի որոշ յուրահատկություններ:

---

[3] ***Աշոտ Ալեքսանյան,*** Հայ միջնադարյան նամակը (IV–XIV դարեր), էջ 112: